ՀՈԴՎԱԾՆԵՐ

ՍՈՑԻԱԼԻԶՄԸ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

ՇԻՐԱԶ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«Մարդու իրավունքների և ազատությունների դրոշը սոցիալիզմի դրոշն է,— ասված է բոլոր ընտրողներին, մեր երկրի քաղաքացիներին ՍՄԿԿ Կենտկոմի ուղղած դիմումի մեջ։— Միայն սոցիալիզմի օրոք պատմության մեջ առաջին անգամ դեմոկրատիան դառնում է ժողովրդի իշխանություն և իշխանություն՝ ժողովրդի համար։ Միայն սոցիալիզմն է հուսալիորեն երաշխավորում մարդկանց քաղաքացիական և քաղաքական իրավահավասարությունը, անհատի իսկական ազատությունը։ Միայն սոցիալիզմն է հաստատում դեմոկրատիայի սկզբունքները հասարակական կյանքի բոլոր ոլորտներում»[1]։

Կուսակցության Կենտկոմի այս դիմումի մեջ ըստ էության տրված է սոցիալիստական հասարակության քաղաքական սիստեմի բազմակողմանի ու խոր գնահատականը, բացահայտված է բուրժուականի հանդեպ սոցիալիստական դեմոկրատիայի անվիճելի առավելությունը։ Սոցիալիստական դեմոկրատիան քաղաքացիների սոցիալ-տնտեսական, քաղաքական և անձնական իրավունքների ու ազատությունների երաշխավորվածությունն է, այդ իրավունքների ու ազատությունների՝ քաղաքացիական պատասխանատվությունից, իսկ անձնական շահերի՝ հասարակական շահերից անբաժանելիությունը։

Սոցիալիզմի պայմաններում մարդու ռեալ իրավունքների ու ազատությունների երաշխավորվածությունը սոցիալիստական դեմոկրատիայի և սոցիալական պատասխանատվության խոր ըմբռնման կարևորագույն բաղկացուցիչ մասն է։ Դա այդպես է, որովհետև հենց իր իրավունքների ու ազատությունների սահմանադրական երաշխավորվածությունն է ընդունակ՝ քաղաքացու մոտ ծնելու հասարակության հանդեպ մեծ ու մնայուն պատասխանատվություն, ընդունակ հաստատելու դեմոկրատիայի սկզբունքները հասարակական կյանքի տարբեր ոլորտներում։

Իրավունքների ու ազատությունների դրոշը սոցիալիզմի դրոշն է, որովհետև հենց սոցիալիզմի պայմաններում են ձևավորվում և, որ ամենակարևորն է, լիովին բավարարվում մարդու կենսականորեն կարևոր պահանջմունքները։ Համաձայն մարդու էության մատերիալիստական ըմբռնման, հասարակության լիարժեք անդամն ամենից առաջ աշխատանքային գործունեության, աշխատելու, ինտելեկտուալ զարգացման, սոցիալական և էկոլոգիական առողջ միջավայրում ապրելու և ստեղծագործելու կարիք ունի։ Սրանք, հիրավի, բազիսային, ֆունդամենտալ սոցիոգեն պահանջմունքներ են, առանց որոնց լիարժեք բավարարման անհնարին է պատկերացնել սոցիալապես ու

---

1 *«Սովետական Հայաստան», 3. II. 1979։*

հոգեպես հարուստ, ներդաշնակ անձնավորություն։ Սոցիալիստական հասարակարգն է, որ, համապատասխան իր էությանն ու ծրագրային նպատակներին, լիովին բավարարում է մարդու բազիսային, ֆունդամենտալ պահանջմունքները, որոնց իրավաբանական-սահմանադրական ձևակերպումն էլ հենց երաշխավորված իրավունքներն են։ Այս ամենը, անշուշտ, բոլորովին չի նշանակում, որ, օրինակ, մարդու քաղաքական իրավունքներն ու ազատությունները ստորադաս նշանակություն ունեն, կամ պարզապես երկրորդային են։ Մենք ուղղակի ցանկանում ենք ուշադրությունը սևեռել մի հանգամանքի վրա։ Դա այն է, որ հասարակության մեջ գոյություն ունի մարդու, քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների մի յուրօրինակ աստիճանակարգ, որն իր ամբողջության մեջ, իր ներքին տրամաբանական միասնությամբ ներկայացնում է սոցիալիստական իրականության, սոցիալիստական դեմոկրատիայի բնութագիծը։

Հիրավի, անառարկելի է, որ հասարակական մարդը միայն աշխատանքում, աշխատանքային գործունեության ոլորտում կարող է լիովին դրսևորել իր ինտելեկտուալ ու հոգեկան կարողությունները, ստեղծագործաբար ծառայել իր և հասարակական շահերին, դառնալ սոցիալական գիտակից էակ և սոցիալական պատասխանատվության սուբյեկտ։ Այստեղից հասկանալի է, որ սոցիալիստական հասարակարգն իր էությամբ լինելով հումանիստական, այդքան մեծ տեղ է հատկացնում աշխատանքի իրավունքին։ Օրինաչափ և միանգամայն պատկերավոր է այն, որ Կ. Մարքսը սոցիալիստական հասարակարգը համեմատել է «աշխատանքի թագավորության» հետ։ Այսօր, երբ մեր երկրում ստեղծված է «աշխատանքի թագավորություն», սահմանագրությունը վավերագրել է այդ «թագավորության» հիմնական օրենքը՝ երաշխավորված աշխատանք ունենալու իրավունքը։ «ՍՍՀՄ քաղաքացիները ունեն աշխատանքի իրավունք, այսինքն երաշխավորված աշխատանք ստանալու իրավունք,— ասված է համաժողովրդական սոցիալիստական պետության հիմնական օրենքի 40-րդ հոդվածում։

Այդ իրավունքն ապահովվում է տնտեսության սոցիալիստական սիստեմով, արտադրողական ուժերի անշեղ աճով, անվճար պրոֆեսիոնալ ուսուցմամբ, աշխատանքային որակավորման բարձրացմամբ և նոր մասնագիտությունների ուսուցմամբ, պրոֆեսիոնալ կողմնորոշման և աշխատանքի տեղավորման սիստեմների զարգացմամբ»։ Որ սոցիալիստական հասարակարգում գոյություն ունի երաշխավորված աշխատանքային իրավունք, հաստատվում է նաև պատմականորեն։ Արդեն 1930-ական թվականների սկզբին մեր երկրում իսպառ վերացվել էր գործազրկությունը։ Գործազրկության վերացումը և գործազրկության առաջացման սոցիալ-տնտեսական ու քաղաքական հիմքերի խորտակումը վիթխարի պատմական նվաճում է։ Եվ այսօր պատահական չէ, որ այդ ամենը դարձել է սովետական մարդու ապրելակերպի, աշխատանքային ապրելակերպի ամենաբնորոշ գիծը։ Միաժամանակ, հենց երաշխավորված աշխատանքի շնորհիվ է, որ անշեղորեն աճել է սովետական մարդկանց բարեկեցությունը։ «Վերջին ընտրությունների ժամանակվանից բնակչության մեկ շնչին ընկնող ռեալ եկամուտները աճել են 20 տոկոսով։ Բանվորների և ծառայողների միջին աշխատավարձը բարձրացել է 19 տոկոսով, իսկ կոլտնտեսականների աշխատանքի վարձատրությունը՝ 26 տոկոսով։ Բարելավվել է կենսաթոշակային ապահովությունը։ Սպառման հանրային ֆոնդերից կա-

տարվող վճարումները յուրաքանչյուր մարդու հաշվով տարեկան 312 ռուբլուց հասել է 404 ռուբլուս[2]։ Սոցիալիզմի օրոք քաղաքացին, հասարակության անդամը տեսնում է, որ աշխատում է իր համար, չկան իր աշխատանքի արդյունքները յուրացնող սոցիալական տիրող ուժեր և խմբեր։ Ահա աշխատանքի, աշխատանքային իրավունքի նկատմամբ սոցիալական մեծ պատասխանատվության իսկական ակունքը։

Այժմ անդրադառնանք բուրժուական իրականությանը։ Այժմ կապիտալիստական աշխարհի գլխավոր երկրներում աշխատանք չունի 17 մլն. մարդ, որից 10 մլն.-ը երիտասարդներ են։ ԳԴՀ-ում լույս տեսնող «Հորիզոնտ» հանդեսի տվյալներով միայն ԱՄՆ-ում 3 մլն. պատանիներ ու աղջիկներ կյանք մտնելով, չեն կարողանում դրսևորել իրենց ընդունակությունները։ Նրանք գործազուրկ են և զրկված են աշխատանք պահանջելու սահմանադրական իրավունքից, քանի որ ԱՄՆ-ի սահմանադրության մեջ նույնիսկ չի հիշատակվում աշխատանքի իրավունք ունենալու մասին[3]։ Ուշադրության են արժանի նաև հետևյալ փաստերը. Իտալիայում երիտասարդ գործազուրկների թիվը հասնում է 1 մլն-ի, Ֆրանսիայում՝ 750 հազարի, Մեծ Բրիտանիայում՝ 650 հազարի, Կանադայում և Ճապոնիայում՝ 500-ական հազարի, Իսպանիայում՝ 450 հազարի, Պորտուգալիայում՝ 330 հազարի, ԳՖՀ-ում՝ 300 հազարի, Բելգիայում՝ 150 հազարի, Հոլանդիայում՝ 100 հազարի, Ֆինլանդիայում՝ 75 հազարի, Դանիայում և Իռլանդիայում՝ 70-ական հազարի, Հունաստանում՝ 60 հազարի, Շվեդիայում՝ 54 հազարի[4]։ «Այստեղ, կապիտալիզմի աշխարհում,— ասված է կուսակցության Կենտկոմի վերոհիշյալ դիմումի մեջ,— ուժեղանում է մարդու կողմից մարդու շահագործումը, մշտապես ոտնահարվում են աշխատավորների իրավունքները, առկա է տնտեսական ճգնաժամ, ինֆլյացիա, իրոնիկական գործազրկություն։ Դաժանություն և կամայականություն, անտարբերություն աշխատավոր մարդու ճակատագրի նկատմամբ, հասարակական բարոյականության անկում՝ ահա թե ինչ է ժամանակակից բուրժուական հասարակությունը։ Ուստի, առանձնապես ցինիկ տեսք ունեն կապիտալիզմը ազատ հասարակություն ներկայացնելու փորձերը։ Ո՛չ, կապիտալիզմը մի հասարակություն է, որը ճնշում է մարդու իրավունքները։ Դա ապագա չունեցող հասարակություն է»[5]։

Կապիտալիստական հասարակարգն ապագա չունի նաև այն պատճառով, որ դաժանորեն շահագործում է երեխաներին։ Կապիտալի աշխարհում երեխաների աշխատանքին դիմում են ոչ թե նրա համար, որ ազատ աշխատատեղեր կան, այլ այն պատճառով, որ վերջիններս շատ քիչ են վարձատրվում։ Աշխատանքի միջազգային կազմակերպության տվյալներով կապիտալիստական երկրներում մինչև 15 տարեկան 52 մլն. երեխաներ, կորցնելով իրենց մանկությունը, վարձու աշխատանք են կատարում, իսկ ՄԱԿ-ի մանկան ֆոնդի (ՅՈՒՆԻՍԻՖ) տվյալներով 500 մլն. երեխաներ ապրում են ծայրահեղ դժվարին պայմաններում[6]։ Այս ամենը միանգամայն հրատապ է դարձնում երե-

---

2 Նույն տեղում։

3 И. Карпец, Право развитого социализма и свобода личности («Коммунист», 1979, № 1, էջ 49)։

4 «Правда», 6.II.1979.

5 «Սովետական Հայաստան», 3. II. 1979։

6 «Новое время», 1979, № 2, էջ 1։

խաների իրավունքների, երջանիկ լինելու իրավունքի պաշտպանությունը։ Եվ ահա 1979 թ., երբ լրանում է ՄԱԿ-ի՝ Մանկան իրավունքների դեկլարացիայի ընդունման 20-ամյակը, XXXI Գլխավոր ասամբլեան հայտարարել է մանկան միջազգային տարի։ Այս կապակցությամբ խոշորագույն միջոցառումը կլինի «Հանուն բոլոր երեխաների խաղաղ ու երջանիկ ապագայի» նշանաբանով համաշխարհային կոնֆերանսի գումարումը։ Բոլորովին էլ պատահական չէ, որ այն տեղի կունենա Մոսկվայում, աշխարհում առաջին սոցիալիստական երկրի մայրաքաղաքում, երկիր, որտեղ երեխայի նկատմամբ ունեցած վերաբերմունքի հիմքում ընկած է «Ամենն լավագույնը՝ երեխային» լենինյան մարդասիրական սկզբունքը։ Երեխաների նկատմամբ սոցիալիստական պետության ստանձնած պարտականությունները վավերագրված են սահմանադրորեն։

Հասարակության մեջ մարդու ազատ ու լրիվ զարգացումը ենթադրում է նաև նրա ինտելեկտուալ աճը, որը հնարավոր է միայն կրթության, ինքնակրթության զարգացման շնորհիվ։ Այստեղից էլ կրթություն ստանալու կամ կրթական իրավունք ունենալու բացառիկ մեծ կարևորությունը։ Կրթությունը, ինտելեկտուալ զարգացման հնարավորությունն անհրաժեշտ են ոչ միայն մարդու, այլև հասարակության համար։ Մեր ժամանակաշրջանը բնութագրվում է սոցիալ-տնտեսական ու գիտատեխնիկական վիթխարի տեղաշարժերով, այդ տեղաշարժերի արագացմամբ, հասունացած պրոբլեմների համապարփակությամբ ու աննախադեպ բարդությամբ, մարդկային վերափոխիչ գործունեության հետևանքների սոցիալական մեծ նշանակալիությամբ։ Այս ամենն անառարկելիորեն պահանջում է մարդու, գործունեության սուբյեկտի դերի մեծացումը, նոր որակի ու ծավալի գիտական դիտելիքներ։ Ժամանակակից հասարակությունը կարիք ունի նոր տիպի ռեսուրսների՝ ինտելեկտուալ ռեսուրսների։ Նման պայմաններում միայն այն հասարակական սիստեմը կարող է դառնալ մարդկության առաջատար սոցիալական ուժը, որը լայն հնարավորություններ կստեղծի մարդու ինտելեկտուալ զարգացման, ստեղծագործ ու կոնստրուկտիվ մտքի ձևավորման համար։ Այդպիսին հենց սոցիալիստական հասարակարգն է, որտեղ գոյություն ունի երաշխավորված կրթության անքակտելի իրավունք, որը սոցիալիստական իրավունքի բաղկացուցիչ մասն է։ ՍՍՀՄ քաղաքացիների կրթություն ստանալու իրավունքը վավերագրված է նոր սահմանադրության 45-րդ հոդվածում, որտեղ նշված են նաև այդ իրավունքն ապահովող տնտեսական, սոցիալական և քաղաքական երաշխիքները։ Երաշխավորված կրթական իրավունքի շնորհիվ մեր երկրում վիթխարի առաջադիմություն է ձեռք բերվել։ Ոչ միայն իսպառ վերացվել է անգրագիտությունը, այլև սովետական քաղաքացին դարձել է աշխարհում ամենաընթերցասեր մարդը։

Կոմունիստական կուսակցությունը և սովետական պետությունը մեծ ուշադրություն են դարձնում մեր ողջ կրթական համակարգի հետագա կատարելագործմանը։ Դրա շնորհիվ մեր երկրում ուսուցման բոլոր ձևերի մեջ ընդգրկված է ավելի քան 95 միլիոն մարդ։

Այս ամենի հակապատկերը մենք տեսնում ենք Արևմուտքի երկրներում, որտեղ աշխատանք չունենալու ռեալ հնարավորությանը գումարվում է նաև կրթություն չստանալու հնարավորությունը։ ՅՈՒՆԵՍԿՈ-ի տվյալներով այսօր աշխարհում ավելի քան 100 միլիոն երեխաներ զրկված են կրթություն ստա-

նալու հնարավորությունից։ Եթե կրթության բնագավառում իրավիճակը արմատապես չբարեփոխվի, ապա 1985 թ. մոտերքը դպրոցական շեմից դուրս կմնան 165 միլիոն երեխաներ[7]։ Եվ սա այն դեպքում, երբ ժամանակակից գիտատեխնիկական հեղափոխության օբյեկտիվ ընթացքը ստիպում է, որ կրթություն ձեռք բերեն բոլորը, այդ թվում հասարակության ստորին խավերի ներկայացուցիչները, մի բան, որն ակնհայտորեն բախվում է կապիտալիզմի սոցիալ-տնտեսական ու քաղաքական հիմքերին։ Մինչդեռ սոցիալիստական հասարակարգում անհատի կրթության իրավունքը բխում է հասարակության էությունից, կրթական համակարգը բացառապես ազատ է սոցիալական, քաղաքական ամեն կարգի խոչընդոտներից։

Մարդն իրեն երջանիկ և ամբողջական չի կարող զգալ միայն աշխատանքով և ինտելեկտուալ զարգացմամբ, անհրաժեշտ է ևս մեկ բաղադրիչ՝ ֆիզիկական և հոգեկան առողջություն։ «Սոցիալական խնդիրների մեջ չկա ավելի կարևոր խնդիր,— ընդգծեց Լ. Ի. Բրեժնևը կուսակցության XXV համագումարում,— քան սովետական մարդկանց առողջության մասին հոգալը»[8]։ Առողջությունը նույնպես վիթխարի կապիտալ է, ռեսուրս, որն այնքան անհրաժեշտ է և՛ անհատին, և՛ հասարակությանը։ Այս ուղղությամբ մեր երկրում հսկայածավալ աշխատանքներ են կատարվել։ Ինչպես նշված է ՍՄԿԿ Կենտկոմի վերոհիշյալ դիմումի մեջ, սովետական մարդկանց առողջության պահպանումը ՍՄԿԿ-ի և սովետական պետության հատուկ հոգատարության առարկան է։ Դրա վառ վկայությունն է այն, որ անընդհատ աճում է հիվանդանոցների և պոլիկլինիկաների, կուրորտների, հանգստյան տների և պանսիոնատների ցանցը։ Մեր երկրում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում երեխաների առողջության պահպանմանը։ Սովետական երեխաներն ունեն իրենց «անձնական» բժիշկները՝ տեղամասային մանկաբույժները։ 1980—1982 թթ. յուրաքանչյուր այդպիսի մանկաբույժի խնամակալության տակ կլինի ոչ ավելի, քան 800 երեխա։ Միայն Անապայում 1980 թ. իրենց առողջությունը կկոփեն 1,5 միլիոն սովետական երեխաներ[9]։

1977 թ. ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհուրդը հատուկ որոշում ընդունեցին «Ժողովրդական առողջապահության հետագա բարելավման միջոցառումների մասին»։ Այդ որոշումը հետևողականորեն իրականացվում է ի շահ ժողովրդական առողջապահության աշխարհում առաջին պետական համակարգի զարգացման, ի շահ սովետական մարդու առողջության ապահովման ու հետագա բարելավման։ Վերցնենք սովետական առողջապահության զարգացման ընթացքը մեր հանրապետության օրինակով։ «Հայաստանի բնակչությանը ներկայումս սպասարկում են 215 հիվանդանոց՝ մոտ 25 հազար մահճակալով, 463 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ, որոնցում աշխատում են 10 հազար բժիշկ»[10]։

ՍՍՀՄ սահմանադրության մեջ ասված է. «ՍՍՀՄ քաղաքացիներն ունեն առողջության պահպանության իրավունք»։ Այդ իրավունքն ամբողջովին երաշխավորվում է առողջապահության պետական հիմնարկների կողմից ցույց

---

7 «Правда», 29.1.1979.

8 «ՍՄԿԿ XXV համագումարի նյութերը», Երևան, 1976, էջ 61։

9 «Здоровье», 1979, № 1, էջ 3։

10 «Սովետական Հայաստան», 25. II. 1979։

տրվող անվճար որակյալ բժշկական օգնությամբ, քաղաքացիների բուժման ու կազդուրման հիմնարկների ցանցի ընդլայնմամբ, անվտանգության տեխնիկայի և արտադրական սանիտարիայի զարգացմամբ ու կատարելագործմամբ, կանխարգելիչ լայն միջոցառումների իրականացմամբ, շրջակա միջավայրի առողջացման միջոցառումներով, աճող սերնդի առողջության նկատմամբ հատուկ հոգատարությամբ (ներառյալ երեխաների այն աշխատանքի արգելումը, որը կապված չէ ուսուցման և աշխատանքային դաստիարակության հետ), հիվանդությունների կանխմանն ու նվազեցմանը, քաղաքացիների երկարամյա ակտիվ կյանքի ապահովմանը նպատակամղված գիտական հետազոտությունների ծավալմամբ։

Այս բոլորը վերաբերում է մարդու տնտեսական ու սոցիալական իրավունքների երաշխավորման գործում սոցիալիստական հասարակության ընձեռած հնարավորություններին։ Սակայն սոցիալիստական հումանիզմը համապարփակ է, այն ներառնում է նաև մարդու՝ առողջ և մաքուր էկոլոգիական միջավայրում ապրելու, ստեղծագործելու ու բնության բարիքներից օգտվելու պահանջմունքի բավարարումը։ Այլ խոսքերով՝ սոցիալիզմի պայմաններում ապահովվում, երաշխավորվում է նաև մարդու էկոլոգիական իրավունքը՝ ոչ միայն օգտվել բնության հարստություններից, այլև ապրել ու աշխատել առողջ էկոլոգիական միջավայրում։ Այսպիսով, մարդու էկոլոգիական իրավունքը բաղկացած է երկու փոխկապակցված մասերից։ Այս իմաստով միանգամայն սխալ և հակահումանիստական են մինչև այսօր էլ Արևմուտքից լսվող կոչերը՝ հրաժարվելու բնության բարիքներից, կոնսերվացնելու բնությունը և վերադառնալու պատմականորեն ավելի ցածր աստիճանի համար բնորոշ արտադրության ու ապրելակերպի։ Սա ամբողջովին հակասում է մարդու աշխատելու, գործելու, վերաստեղծելու էությանը։ Սրան հակառակ, պետք է հրաժարվել ինչպես մարդու, այնպես էլ շրջապատող բնության անխնա շահագործման սկզբունքից, մարդուն և բնությանը շահագործելու բուրժուական իրավունքից։ Մեր երկրում գոյություն ունի բնությունից ռացիոնալ օգտվելու, նրա հարստությունները պահպանելու և վերարտադրելու սոցիալիստական իրավունքը, որն անհրաժեշտ է մարդու էկոլոգիական պահանջմունքները լիովին բավարարելու համար։ Այդ մասին են վկայում շրջապատող բնության վերափոխման նպատակով պլանաչափ ու մասշտաբային գործողությունները Սիբիրում ու Հեռավոր Արևելքում, Միջին Ասիայում ու ՌՍՖՍՀ-ի ոչ սևահողային գոտում, ինչպես նաև մեզ մոտ՝ Սովետական Հայաստանում։

Հսկայական է սոցիալիստական հասարակարգում բնության հանդեպ ցուցաբերվող պետական հոգատարությունը, որը վերջին հաշվով ծառայում է մարդու կենսականորեն կարևոր շահերին։ Այս միտքը հստակ արտացոլված է ՍՍՀՄ նոր սահմանադրության 18-րդ հոդվածում, որտեղ ասված է. «Ելնելով ներկա և ապագա սերունդների շահերից, ՍՍՀՄ-ում անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկվում հողի ու նրա ընդերքի, ջրային ռեսուրսների, բուսական ու կենդանական աշխարհի պահպանման և գիտականորեն հիմնավորված, ռացիոնալ օգտագործման համար, օդի և ջրի մաքրության պահպանման, բնական հարստությունների վերարտադրության ապահովման և մարդու շրջակա միջավայրի բարելավման համար»։ Բնության պահպանումը և հարստացումը վիթխարի ծավալի ու բարդության գործ է, որը պահանջում է տնտեսական, ֆինանսական, նյութական, աշխատանքային ռեսուրսների համա-

պետական մասշտաբով կենտրոնացում և կոմպլեքսային օգտագործում։ Այդ բոլորը գոյություն ունի հենց մեր երկրում։ 10-րդ հնգամյակում բնության պահպանության և բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման ուղղությամբ պետական պլանների կատարման համար նախատեսված է ծախսել պատկառելի մի գումար՝ 11 մլդ. ռ.։ Այս գումարը միայն «ուղղակի» հատկացումների գծով է։ ՍՍՀՄ-ում բնության պահպանության համար նախատեսված ուղղակի և անուղղակի ծախսերը հնգամյակի ընթացքում կազմելու են վիթխարի մի գումար՝ երկրի ազգային եկամտի շուրջ 2,7%-ը[11]։

Մեծ ծավալի աշխատանքներ են կատարվում նաև մեր հանրապետությունում, որտեղ ձևավորվել է ժամանակի համար խիստ բնորոշ էկոլոգիական իրադրություն։ Ներառյալ մելիորատիվ աշխատանքների համար հատկացված գումարը՝ հնգամյակի ընթացքում բնության պահպանության ու բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման պլանների կատարման համար նախատեսված ընդհանուր գումարը 600 մլն. ռ.է[12]։ Մեր հանրապետության համար կենսականորեն կարևոր, հիրավի, պատմական նշանակություն ունի Լ. Ի. Բրեժնևի նախաձեռնությամբ ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի 1978 թ. նոյեմբերին ընդունած որոշումը՝ «Սևանա լճի բնական ռեսուրսների պահպանման և ռացիոնալ օգտագործման միջոցառումների մասին»։ Լրացուցիչ 200 մլն. խորանարդ մետր ջուրը, որը կստանա Սևանը, կնպաստի լճի մակարդակի բարձրացմանը։ Անկասկած, Սևանա լճի պրոբլեմի արմատական լուծումը մի խոշոր, առաջընթաց քայլ է Սովետական Հայաստանի հետագա դինամիկ զարգացման ճանապարհին, քանի որ առանց էկոլոգիական նախադրյալների, իսկապես, այդպիսի զարգացումը տևական լինել չի կարող։

Այսպիսով, ապահովելով մարդու ոչ միայն տնտեսական, սոցիալական, այլև էկոլոգիական իրավունքները, սոցիալիզմն անվերապահորեն ապահովում է թե՛ անհատի, և թե՛ հասարակության հետագա գոյության, ապագա ունենալու հնարավորությունը։

Սոցիալիստական հասարակարգը, առավել քան որևէ այլ հասարակարգ, լիովին ապահովում է նաև մարդու քաղաքական իրավունքներն ու ազատությունները, առանց որի չի կարող լիարժեք համարվել անհատի սոցիալական կերպարը։ Սոցիալիստական դեմոկրատիան, որը ժողովրդի իշխանությունն է և իշխանություն է ժողովրդի համար, ծավալվում է մի հիմնական ուղղությամբ։ Ինչպես նշված է ՍՍՀՄ նոր սահմանադրության 9-րդ հոդվածում, այդ ուղղությունը տանում է քաղաքացիների ավելի ու ավելի լայն մասնակցությանը պետության և հասարակության գործերի կառավարմանը, պետական ապարատի կատարելագործմանը, հասարակական կազմակերպությունների ակտիվության բարձրացմանը, ժողովրդական վերահսկողության ուժեղացմանը, պետական ու հասարակական կյանքի իրավական հիմքի ամրապնդմանը, հրապարակայնության ընդլայնմանը, հասարակական կարծիքը մշտապես հաշվի առնելուն։

Մասնավորապես հասարակական կազմակերպությունների ակտիվության բարձրացմանն է ուղղված այն իրողությունը, որ ՀամԼԿԵՄ-ին վերապահված

[11] В. Г. Соколовский, Всенародное дело охраны природной среды («Новое время», 1976, № 23, էջ 20)։

[12] «Սովետական Հայաստան», 20. X. 1977։

է սահմանադրական նախաձեռնության իրավունք։ Այսօր արդեն 720 հազար պատանիներ ու աղջիկներ երիտասարդությանը ներկայացնում են սովետական իշխանության մարմիններում[13]։

Սոցիալիստական հասարակարգում յուրաքանչյուր քաղաքացի օգտվում է ոչ միայն ընտրելու և ընտրվելու կարևորագույն իրավունքից[14], այլև մի ամբողջ շարք այլ իրավունքներից ու ազատություններից։ Համաժողովրդական սոցիալիստական պետության հիմնական օրենքի 50-րդ հոդվածում ասված է. «Ժողովրդի շահերին համապատասխան և սոցիալիստական հասարակարգի ամրապնդման ու զարգացման նպատակով ՍՍՀՄ քաղաքացիների համար երաշխավորվում են խոսքի, մամուլի, ժողովների, միտինգների, փողոցային երթերի ու ցույցերի ազատություններ»։ Այստեղ առանձնահատուկ նշանակություն ունի այն հանգամանքը, որ նշված քաղաքական ազատությունները դեկլարատիվ բնույթ չեն կրում, այլ սահմանադրությամբ գործնականորեն ապահովվում են։

Այդ նույն հոդվածում նշված է, որ քաղաքական ազատությունների իրականացումն «ապահովվում է աշխատավորներին ու նրանց կազմակերպություններին հասարակական շենքեր, փողոցներ ու հրապարակներ տրամադրելով, ինֆորմացիայի լայն տարածմամբ, մամուլի, հեռուստատեսության և ռադիոյի օգտագործման հնարավորությամբ»։ Այսպիսին է սոցիալիստական դեմոկրատիան իրականում, այդպես են իրականացվում մարդու քաղաքական իրավունքներն ու ազատությունները։

Նույնը չենք կարող ասել ոչ միայն մաոյիստական դիկտատուրայի, այլև ուրիշ քաղաքական ու գաղափարախոսական սիստեմների մասին։ Քաղաքական իրավունքների ու ազատությունների կոպիտ ոտնահարումն առավել ցայտուն է բռնապետական ու գաղութային երկրներում։ Իմպերիալիզմը, որի ռազմաքաղաքական ու տնտեսական հովանու տակ են գտնվում այդ երկրները, մարդուն բռնությամբ զրկում է իր սրբազան իրավունքից՝ հայրենիք ունենալու, մայրենի լեզվով ստեղծագործելու իրավունքից։ Ուստի չի դադարում և չի կարող դադարել բռնապետական ու գաղութային վարչակարգերի դեմ մղվող անդուլ հերոսական պայքարը, որքան էլ որ դա դժվարին, տևական լինի։ Չիլիի, Ռոդեզիայի, Իրանի օրինակը (որտեղ իրանական ժողովրդի համառ պայքարի շնորհիվ շահական-բռնապետական ու իմպերիալիստամետ վարչակարգը արդեն տապալվել է և հռչակվել է Իրանի Իսլամական Հանրապետություն) դրա վառ ապացույցն է։ Օրինաչափ է նաև այն, որ 1978 թ. հերոսական Կուբայում կայացած երիտասարդության ու ուսանողության 11-րդ

---

13 Նույն տեղում, 8. II. 1979։

14 1979 թ. մարտի 4-ին տեղի ունեցած ՍՍՀՄ Գերագույն սովետի ընտրություններին մասնակցել է 174.920.221 մարդ, որը կազմում է ընտրողների ընդհանուր թվի 99%-ը («Известия», 10. III. 1979)։ Իսկ դեպուտատները ներկայացնում են մեր հասարակության բոլոր խավերը, ՍՍՀ Միության բոլոր ազգերն ու ազգություններ։ «Գերագույն սովետի կազմում 34,8 տոկոսը բանվորներ են, իսկ 16,3 տոկոսը կոլտնտեսականներ։ 71,7 տոկոսը՝ ՍՄԿԿ անդամներ և անդամության թեկնածուներ են, 28,3 տոկոսը՝ անկուսակցականներ։ Կանայք ներկայացված են 487 դեպուտատներով, որը կազմում է ժողովրդական ընտրյալների ընդհանուր թվի 32,5 տոկոսը, 317 դեպուտատական տեղեր, կամ 21,1 տոկոսը, ստացել են մինչև 30 տարեկան երիտասարդ մարդիկ» («Коммунист», 1979. № 5, էջ 11—12)։

համաշխարհային փառատոնի նշանաբանն էր «Հանուն հակաիմպերիալիստական համերաշխության, խաղաղության և բարեկամության»։

Մարդու իրավունքների և ազատությունների դրոշը հենց սոցիալիզմի անխախտ դրոշն է։ Բայց մարդու իրավունքների և ազատությունների դրոշը լիովին չէր կարող հռչակվել սոցիալիզմի դրոշ, եթե այդ դրոշի տակ հանդես եկող դասակարգային ու քաղաքական ուժերը միջազգային ասպարեզում ևս անդուլ պայքար չմղեին մարդու արժանավայել գոյության ապահովման համար։ Իր ավելի քան 60-ամյա հերոսական պատմության ընթացքում հզոր Սովետական Միությունը միշտ էլ հետևողականորեն պայքարել է խաղաղության համար, որի հաստատումն ու ամրապնդումը մարդու հիմնական իրավունքների և ազատությունների ապահովման անհրաժեշտ նախադրյալն է։ Սովետական Միությունն ու սոցիալիստական ընկերակցության մյուս երկրներն են, որ ներկայացրել և ներկայացնում են միջազգային ասպարեզում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությանն ուղղված կարևորագույն փաստաթղթերի կամ պայմանագրերի նախագծեր, կամ էլ ջերմորեն օժանդակել ու օժանդակում են դրանց ընդունմանն ու կնքմանը։ Սոցիալիզմի երկրների ջանքերի շնորհիվ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից Մարդու իրավունքների ընդհանուր դեկլարացիան հռչակելուց հետո (1948 թ. դեկտեմբերի 10, որն ի դեպ, Մարդու իրավունքների օրն է) նշված բնագավառում զգալի առաջընթաց է կատարվել։ Անցած 30-ամյա պատմությունը հիմնականում ընթացել է Մարդու իրավունքների ընդհանուր դեկլարացիայի սկզբունքները միջազգային իրավունք դարձնելու ուղիով։ Այդ ընթացքում ՄԱԿ-ի շրջանակներում մշակվել և ընդունվել է մարդու իրավունքների ու ազատությունների վերաբերյալ շուրջ 20 միջազգային-իրավական ակտ։ Այսպես, արդեն 1953 թ. ընդունվեց Կանանց քաղաքական իրավունքների մասին կոնվենցիա, որին այսօր մասնակցում են 84 երկրներ։ Ավելի ուշ՝ 1966 թ., ստորագրվեցին երկու կարևորագույն միջազգային-իրավական համաձայնագրեր. առաջինը՝ «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային պայմանագիրը, իսկ երկրորդը՝ «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային պայմանագիրը։ Իրավաբանական պարտավորվածություն ունեցող այս պայմանագրերն ուժի մեջ են մտել 1976 թ. և, 1977 թ. հոկտեմբերի տվյալներով, դրանց մասնակցում են, համապատասխանաբար, 69 և 68 պետություն-անդամներ[15]։

Մարդու իրավունքների պաշտպանությունն իր արտացոլումը գտավ 1975 թ. Հելսինկիում կայացած Եվրոպայի անվտանգության և համագործակցության խորհրդակցությունում, որի գումարմանը գերազանցապես նպաստեցին Սովետական Միության և սոցիալիստական ընկերակցության մյուս երկրների եռանդուն ջանքերը, մինչդեռ ԱՄՆ-ը մինչև այսօր էլ չի ստորագրել անդամ Մարդու իրավունքների ընդհանուր դեկլարացիան։ Ինչ վերաբերում է Հելսինկիի Եզրափակիչ ակտին, ապա այնտեղ ասված է, որ «նրանք (մասնակից պետությունները—Շ. Մ.) կխրախուսեն և կզարգացնեն քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային և մյուս իրավունքների ու ազատությունների արդյունավետ իրականացումը, որոնք

---

15 Карел Васак, 30 лет спустя. Всеобщая декларация прав человека («Курьер ЮНЕСКО», декабрь, 1977, էջ 29)։

բոլորն էլ բխում են մարդկային անհատին հատուկ արժանապատվությունից և էական են նրա ազատ ու լրիվ զարգացման համար»[16]։

Վարշավայի պայմանագրի մասնակից պետությունների քաղաքական կոնսուլտատիվ կոմիտեի 1978 թ. նոյեմբերի 23-ին Մոսկվայում կայացած խորհրդակցությունում ընդունած դեկլարացիայում սոցիալիստական երկրների պատվիրակություններն իրենց պարտք համարեցին ընդգծել Հելսինկիի Եզրափակիչ ակտում նշված մարդու հիմնական իրավունքների ու ազատությունների համընդհանուր նշանակությունը, որոնց հարգումը խաղաղության, արդարության և բարեկեցության էական գործոն է[17]։

Այսպես հետևողականորեն սոցիալիստական երկրներն ապահովում են մարդու իրավունքներն ու ազատությունները ներպետական կյանքում և պայքարում՝ նույն իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար՝ միջազգային ասպարեզում, բոլորովին չմիջամտելով ուրիշ երկրների ներքին գործերին։

Այսպիսով, մենք ակնհայտորեն տեսնում ենք, որ երկու հակադիր սոցիալ-տնտեսական և քաղաքական սիստեմների գաղափարախոսական անզիջում պայքարում մարդու հիմնական իրավունքների ու ազատությունները ապահովման և պաշտպանության հարցերը կենտրոնական տեղ են գրավում։ Եվ միանգամայն օրինաչափ է, որ միայն սոցիալիստական հասարակարգն է լիովին ապահովում ու հուսալիորեն պաշտպանում մարդու իրավունքներն ու ազատությունները. այդ պատճառով էլ իրավունքների ու ազատությունների դրոշը սոցիալիզմի անխախտ դրոշն է։

СОЦИАЛИЗМ И ПРАВА ЧЕЛОВЕКА

ШИРАЗ МАРТИРОСЯН

Резюме

В современном обществе существует определенная иерархия прав и свобод человека. Среди них следует различать фундаментальные или базисные права. Это право на труд, право на образование, экологическое право, а также право на здоровье. Кроме этих социально-экономических прав существуют политические права и свободы, среди которых важнейшими являются право избирать и быть избранным, свобода слова и печати. В социалистическом обществе созданы все необходимые социально-экономические и политические предпосылки для надежного гарантирования основных прав и свобод человека, что нашло свое юридическое отражение в новой Конституции СССР.

---

16 «Հանուն խաղաղության, անվտանգության և համագործակցության Հելսինկիում կայացած Եվրոպայի անվտանգության և համագործակցության խորհրդակցության արդյունքների շուրջը. 1975 թ. հուլիսի 30-ից օգոստոսի 1-ը», Երևան, 1975, էջ 25։

17 «Սովետական Հայաստան», 24. XI. 1978։